

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՔՐԻՍՏՈՍ ՀՐԱՄԻՒՐԵԼ ՄԵՐ ԿԵՎՆՔԵՐՈՒՆ ՄԵԶ

Որպեսզի կարենանք փրկութիւն, անհրաժեշտ է Քրիստոսը հրամիրել մեր կեանդերուն մեջ ո՛չ միայն իբրև Փրկիչ, այլև՝ իբրև Տէր: Շատեր զայն կ'ընդունին իբրև Փրկիչ, բայց անոր հետ չեն վերաբերիր իբրև Տիրոց: Քրիստոս Փրկիչ է այն', բայց միաժամանակ Տէր է: Ան Փրկիչ է, որովհետեւ մեզ փրկեց յափանական դատապարտութենէն եւ Տէր է, որովհետեւ մեզ ազատեց Սատանային տիրապետութենէն, որպեսզի ի՞նք ըլլայ մեր Տէրն ու մեր վրայ տիրապետողը: Երբ մեկ կողմէն կ'ընդունինք իր Փրկիչ ըլլալը, բայց միւս կողմէն մեր կեանդին վերաբերեալ բոլոր որոշումները մենք կ'առնենք այդ կը նշանակէ, թէ Յիսուսի կամքն ու խօսքը չեն, որ կը տիրեն մեր կեանդերուն մեջ, այլ՝ մեր կամքն ու խօսքը:

**ՄԵԿ ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ
ԿԱՐԴԱՆՔ ԱՍԲՈՂՋ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ**

ՓԵՏՏՐՈՒԱՐ 2020

	Դեւուացուց	Մատքենս
17	Դեւուացուց 19.20	27.51-66 Մատքենս
18	Դեւուացուց 21.22	28 Մարկոս
19	Դեւուացուց 23.24	1.1-20 Մարկոս
20	Դեւուացուց 25 26,27	1.21-45 Մարկոս
21	Թուուց 1,2	2 Մարկոս 3.1-19

ՀԱՍՑԵ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook.com/jerak.drusaq.merk

ՀԱՐՑՈՒՄ

Ի՞նչ է Տեառնընդառաջը:

Քառասնօթեայ Յիսուսի տաճար տանելու օրուան յիշատակն է: Մովսեսի օրենքին համաձայն Յովսեփի եւ Մարիամ քառասնօթեայ Յիսուսին տաճար տարին՝ Տիրոց առջեւ հանելու (Տեառն ընդ առաջ): Յրեաներու մօտ, սովորութիւնն էր, որ արու ունեցող մայրերը նախ եօթը օր սպասեին իբրեւ անմաքուր, ութերորդ օրը թլփատեին տղուն, երեսուներկու օր եւս սպասեին: Այսուհետեւ յաջորդ քառասուներորդ օրը, արու զաւակին պիտի տանեին տաճար՝ Տիրոց առջեւ ընծայելու համար:

Տեառնընդառաջը կը գուգադիպի Փետրուար ամսուան 14-ին (Յունուար 6+40 օր) եւ անշարժ է: Որպես Տէրուսական տօն՝ 13 Փետրուարի երեկոյեան կը կատարուի նախատուսակ, մոմեր վառելով եկեղեցւոյ սեղանի մոմեն, հաւատացեալները զանոնք կը տանին տուն:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտուել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՊԵՐԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ Խ ԸՆԴՀԱՐՈՒՄ ՀՂՅԱ
(Աղ.119.105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 16 ՓԵՏՐՈՒԱՐ 2020

ԹԻՒ 7

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եսայի 63.18-64.12: Տիս 1.1-11:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԵՏԱՐԱՄՆԵ ԸՆՎՀԱՆՍՈՒ 7.37-52

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

ԸՆՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 7.37-52

Տօնին վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուս ոտքի կանգնած՝ բարձրաձայն կ'ըսէք. Ով որ ծարաւ Ե՛ թող ինծի գայ եւ խմէ: Ով որ ինծի կը հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ. «Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բիին»:

Յիսուս ասիկա կ'ըսէք Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. իսկ Հոգին տակաւին չեր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:

Ժողովուրդին ոմանք երբ լսեցին այս խօսքերը, ըսին. Ասիկա է նշարիտ մարգարէն:

Ուրիշներ կ'ըսէին. Քրիստոսն է:

Իսկ ոմանք ալ կ'ըսէին. Միթէ Գալիլեայէն պիտի գայ Քրիստոսը: Սուրբ գիրքը չ'ըսէք, թէ Քրիստոս Դաւիթ բագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի բաղաժին՝ Բեթլեհէմի մեջ պիտի ծնի:

Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան ժողովուրդին մեջ: Ոմանք ուզեցին ձերբակալել զինք, բայց ոչ ո՛չ համարձակեցաւ ձեռք զարնել:

Երբ տաճարին պահակները վերադարձան, աւագ քահանաներն ու Փարիսեցիները հարցուցին անոնց. Ինչո՞ւ զինք հոս չբերիք:

Պահակները պատասխանեցին. Այս մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած:

Փարիսեցիները ըսին. Ի՞նչ, դո՞ւք ալ խարուեցաք: Իշխանաւորներէն կամ Փարիսեցիներէն ուսւէ մեկը հաւատա՞ց անոր: Մեր Օրէնքը չգիտցող տգէտ ամբոխը միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են:

Նիկողեմոս, Փարիսեցիներէն մեկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. Արդեօֆ մեր Օրէնքը մարդս կը դատէ՞ նախքան զինք լսելը եւ գիտնալը թէ ի՞նչ ըրած է:

Անոնք պատասխանեցին նիկողեմոսի. Միթէ դո՞ւք ալ Գալիլեայէն ես: Քննէ՛ Սուրբ գիրքերը եւ պիտի տեսնես, թէ Գալիլեայէն մարգարէ չ'ելլեր:

Ապա ամէն մարդ իր տունը դարձաւ:

ՄԱՐԳԱՐԵՍԿԱՆ ԳԻՐՋԵՐ ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵՆԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒԻՆ ԳԻՐՋԵՐ

63.18- - 64.12

Զըլլայ, որ ընդմիշտ կորսնցնենք Սիոնը, քու սուրբ լեռդ, որովհետեւ ահա մեր թշնամիները առժամաբար տիրեցին մեզի, ոտնակոյն ըրին քու սրբարանդ, ու մենք եղանք առաջուան նման, երբ տակակին մեր Տէրը չէիր դուն, երբ դեռ քու անունդ չէինք կրեր:

Եթէ երկինքը պատուիր եւ երկիր իշնէիր, լեռները քու դիմացդ պիտի դողային ու հալէին մոմի պէս, ինչակա կրակը կ'այրէ անտառները եւ կը շոգիացնէ ծովերը: Հակառակորդներդ պիտի ճանչնային քու անունդ եւ հերանոսներ պիտի դողային քու դիմացդ, նիշդ ինչակա քանիցս իշար եւ անսպասելի հրաշագործութիւններէդ լեռները սասանեցան:

Որեւէ ականջ երբեք լսած չէ, որեւէ աչք տեսած չէ Աստուած մը, բացի քեզմէ, որ իրեն յուսացողներուն ողորմի այնպիսի գործերով՝ որ դուն ըրիր: Դուն օգնութեան կը հասնիս բոլոր անոնց որոնք ուրախութեամբ արդարութիւն կը գործեն եւ դուն ըրիր: Եթէ առաջ անսուտն Աստուած ինք խոստացաւ այդ կեանքը, իսկ հիմա յարմար ժամանակը հասած համարելով՝ այդ խոստումը յայտնեց իր Աւետարանով, որուն քարոզութեան կոչուեցայ մեր փրկիչ Աստուծոյն հրամանով:

Ո՞վ Տիտոս, մեր հասարակաց հաւատքի ճամրով իմ հարազատ որդիս, թող Հայրն Աստուած եւ մեր փրկիչը Քրիստոս Յիսուսը եւ խաղաղութիւն պարզեւեն քեզի:

Քեզ Կրետէ թողուցի, որպէսզի եկեղեցին պէտքերը հոգաս եւ զայն կազմակերպես՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ երկցներ կարգելով, ինչպէս որ քեզի պատուիրեցի: Երիցութեան թեկնածուն պէտք է անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր ըլլայ եւ հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեամբ եւ անհնազանդութեամբ ամբաստանուած չըլլան: Արդարեւ, եախակոպոսը՝ որպէս Աստուծոյ տնտեսը՝ պէտք է անմեղադրելի ըլլայ:
ՇԱՐՈՒԻՆԾԿԵԼ ԱՍՏՈՒՄԾՄԾՈՒՆՉԵՆ



ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵՆԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ՏԻՏՈՍԻ 1.1-11

Ես, Պողոս, Աստուծոյ ծառան եւ Յիսուս Քրիստոսի առաքեալը, կոչուած եմ Աստուծոյ ընտրեալները բերելու հաւատքի եւ ճշմարտութեան ճանաչումին, այն ճշմարտութեան՝ որ աստուածպաշտութեամբ կը գտնուի, որպէսզի յաւիտենական կեանքի յոյսը ունենան: Յաւիտենական ժամանակներէն իսկ առաջ, անսուտն Աստուած ինք խոստացաւ այդ կեանքը, իսկ հիմա յարմար ժամանակը հասած համարելով՝ այդ խոստումը յայտնեց իր Աւետարանով, որուն քարոզութեան կոչուեցայ մեր փրկիչ Աստուծոյն հրամանով:

Ո՞վ Տիտոս, մեր հասարակաց հաւատքի ճամրով իմ հարազատ որդիս, թող Հայրն Աստուած եւ մեր փրկիչը Քրիստոս Յիսուսը եւ խաղաղութիւն պարզեւեն քեզի:

Քեզ Կրետէ թողուցի, որպէսզի եկեղեցին պէտքերը հոգաս եւ զայն կազմակերպես՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ երկցներ կարգելով, ինչպէս որ քեզի պատուիրեցի: Երիցութեան թեկնածուն պէտք է անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր ըլլայ եւ հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեամբ եւ անհնազանդութեամբ ամբաստանուած չըլլան: Արդարեւ, եախակոպոսը՝ որպէս Աստուծոյ տնտեսը՝ պէտք է անմեղադրելի ըլլայ:
ՇԱՐՈՒԻՆԾԿԵԼ ԱՍՏՈՒՄԾՄԾՈՒՆՉԵՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՍԱՅԱԿ ՊԱՐԹԵՒ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Սահակ Պարթեւ Ս. Գրիգոր Լուսատորիչի տոհմէն, Սեծն Ներսէս Կաքողիկոսի որդին էր: Անոր ապրած կեանքի, վարած հայանպաստ քաղաքականութեան մասին մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ իհնագերորդ դարու պատմիչ՝ Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմութիւն» աշխատութեան մէջ:

Սահակ Պարթեւ Հայրապետ ծնած է Կեսարիա, 384 թուականին: Սուրբը կը ստանայ յունական կրթութիւն եւ կը դառնայ հմուտ ժամանակակից երաժշտական ու հուսուրական արուեստին եւ փիլիսոփայութեան: Ս. Սահակ կ'ապրի իր հօր հոգածութեան ներքեւ: Խէեւ քաջ գիտակ էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն գրականութեան, բայց աւելի խելամուտ էր Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Կը սիրեր աղօթել եւ լեցուն էր Աստուծոյ Հոգինվ ու շնորհներով: Զափահաս դառնալէն ետք շրջապատը կը ստիպէ, որ Ս. Սահակ Պարթեւ մնայ աշխարհական, որպէսզի շարունակուի Լուսատորիչի տոհմը: Ան յաճախ Աստուծմէ կը խնդրէ, որ իրեն արու զաւակ մը պարգևէ: Սակայն կը ծնի Սահականուշը:

Վաղարշապատ մայրաքաղաքի մայր եկեղեցւոյ մէջ Աւագ Հինգշարքի օր, պատարագի ընթացքին, Ս. Սահակ, որպէս սարկաւագ պէտք է սպասաւորեր:

Պատարագի աւարտին, երբ ան նատած էր Ս. Սեղանին մօտ, վրան թմրութիւն մը կու գայ: Աստուծոյ հրեշտակը լուսատոր մարդու կերպարանքով կ'երեւի եւ կը յայտնուի, որ պիտի դադրի Լուսատորի տան քահանայապետութիւնը, իսկ Արշակունեաց քագաւորութիւնն ալ պիտի խափանուի:

Ս. Սահակ կը նուիրուի քահանայապետական կարգին եւ միաժամանակ կը հոգայ եկեղեցւոյ պէտքերը: Իր Սահականուշ դուստրն ալ կնութեան կու տայ Համազասպ Մամիկոնեանին:

387-ին, կը ձեռնադրուի կաքողիկու:

Հակառակ տիրող քաղաքական անբարենպաստ պայմաններու, հայոց Վոամշապուի քագաւորի եւ Ս. Սահակ կաքողիկոսի համատեղ ջանքերով երկիրը կ'ապրի խաղաղութեան մէջ ու կը բարգաւաճի: Վոամշապուի քարեպաշտ քագաւորի օգնութեամբ ձեռնամուխ կ'ըլլայ բազմաթիւ վաճքեր ու եկեղեցիներ կառուցելու եւ միաժամանակ կը նորոգէ Ս. Հոփիսիմեանց վկայարանը: Որոշ ժամանակ ետք միաբանելով Ս. Սեսրոպի հետ, կը զբաղի հայոց նշանագիրեր գտնելու սուրբ գործով: Իր աշակերտները կ'ուղարկէ զանազան քաղաքներ, որպէսզի գտնեն բազմաթիւ օգտակար գիրքեր, հայերէնի բարգմաննեն եւ գործածեն հայոց դպրութեան մէջ: 417-ին Ս. Սահակ կը դիմէ Կայսեր եւ Պոլսոյ պատրիարքին, իր թոռան՝ Վարդան Մամիկոնեանի հայոց սպարապետ ճանճնալու խնդրանքով: Կայսրն ու Պատրիարքը յարգելով Հայրապետը կ'ընդառաջեն անոր խնդրանքին: